Ընդդիմախոսական կարծիք

Հայկուհի Մանվելի Մուրադյանի «Մշակութային քաղաքականության նոր համակարգի ձևավորումը Հայաստանում. խորհրդային ավանդույթը, ազգային ռեսուրսները և եվրոպական հեռանկարները (20-րդ դարի վերջ և 21-րդ դարի սկիզբ)» թեմայով

Թ 00. 06 «Մշակութաբանություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսական աշխատանքի վերաբերյալ

Գաղտնիք չէ, որ արդի համաշխարհայնացման գործընթացներում Հայաստանը դեռ լուրջ անելիքներ ունի սեփական դիմագիծը պահպանելով՝ բոլոր երկրների հետ արժանապատիվ փոխհարաբերություններ հաստատելու և մշակութային երկխոսություն վարելու ոլորտներում: Հատկապես, հետխորհրդային տարիներին հարևան երկրների կողմից հայկական մշակութային ժառանգության դեմ կազմակերպվող բազմաթիվ ոտնձգությունների խորապատկերում՝ հույժ կարևորվում է մեր պետության մշակութային քաղաքականությունն ազգային անվտանգության համակարգում դիտարկելու և համապատասխան ռազմավարություն իրականացնելու խնդիրը: Ուստի՝ հանրային պաշտպանության ներկայացվող վերոհիշյալ ատենախոսության թեման խիստ արդիական է ՀՀ-ի մշակութային քաղաքականության ամբողջական պատկերը մասնագիտորեն քննության առնելու, հստակեցնելու, ինչպես նաև ոլորտի կառավարման համակարգը համակողմանի բնութագրելու և ռազմավարություն իրականացնելու տեսանկյունից:

Նշենք, որ մինչ օրս խնդրին առնչվող գիտական հիմնարար հետազոտություններ չեն կատարվել, թեև առանձին հարցերին նվիրված անդրադարձեր հրապարակվել են թե՛ մամուլում, թե՛ մասնագիտական պարբերականներում: Ըստ այդմ, պետք է փաստել, որ ՀՀ-ի մշակութային քաղաքականության խորհրդային և հետխորհրդային համակարգերի համեմատական քննությունը և զարգացման հնարավորությունները՝ նման համալիր քննությամբ և մշակութաբանական վերլուծությամբ՝ ատենախոսի կողմից առաջին անգամ է ներկայացվում գիտական հանրույթին և արժանի է գնահատանքի:

Նշենք նաև, որ մշակութային քաղաքականության գիտական հետազոտությունը կարևորագույն նշանակություն ունի թե՛ տեսական, և թե՛ երկրի զարգացման ընդհանուր ռազմավարությունը գործնական-կիրառական մակարդակներում պլանավորելու և իրականացնելու առումներով: Նման հետազոտությունները անհրաժեշտ են նաև կառավարություն-հասարակություն-մշակույթ-տնտեսություն

Сканировано с CamScanner

հարաբերությունների վերաձևակերպման և երկրի զարգացման համալիր ծրագրեր նախագծելու և համակարգը կառավարելու գործընթացներն առավել արդյունավետ կազմակերպելու գործում: Աշխատանքի այժմեականությունն ու գործնական նշանակությունը շեշտադրվում են, նաև վերջերս Ազգային ժողովում կառավարության առաջարկած ծրագրի քննարկումների համատեքստում: Ըստ այդմ՝ Հ. Մուրադյանի հետազոտությունը կնպաստի պատկան մարմիններին

- իբրև ամբողջական համալիր դիտարկելու հետխորհրդային Հայաստանում մշակութային քաղաքականության վերաբերյալ պատկերացումներն ու ծավալվող գործընթացները,
- համապատասխան եզրահանգումներ անելով՝ խուսափել անցյալի սխալներից,
- համակողմանի ռազմավարական ծրագրեր մշակել՝ արդի համաշխարհայնացման գործընթացներում ի նպաստ Հայաստանի գործելու նպատակով:

«Մշակութային քաղաքականության նոր համակարգի ձևավորումը Հայաստանում. խորհրդային ավանդույթը, ազգային ռեսուրսները և եվրոպական հեռանկարները (20-րդ դարի վերջ և 21-րդ դարի սկիզբ)» թեմայով Հ. Մուրադյանի ներկայացրած ատենախոսական աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և ծավալուն հավելվածից: Ընդունված կարգի համաձայն՝ առաջաբանում քննարկվում են ատենախոսության թեմայի նշանակությունն ու արդիականությունը, նպատակն ու խնդիրները, գիտական նորույթը, մեթոդաբանական հիմքը, գրականության տեսությունը, քննության ներկայացվող դրույթները, գործնական նշանակությունը, աշխատանքի կառուցվածքն ու բովանդակությունը: Ատենախոսության այս հատվածում հակիրճ բնութագրվում են նաև մշակույթի ընկալման ու բնորոշման, մշակութային քաղաքականության սահմանման և տեսական մոտեցումներում ժամանակի անվանի գիտնականների կարծիքներն ու առաջարկված տիպական մոդելները: Միաժամանակ, իրավացիորեն շեշտվում է, որ հաճախ տեսական մակարդակում ներկայացված տիպական մոդելներն իրականության մեջ փոխակերպվում են և ներկայանում այլևայլ տարբերակումներով: Դա մեծապես պայմանավորված է մշակույթի հանրային և պետական ընկալումների առանձնահատկություններով, պետական և ազգային գաղափարախոսությամբ, կառավարման համակարգով, ռեսուրսներով, ենթակառուցվածքներով և այլն: Ինչպես նշում է ատենախոսը՝ մշակութային քաղաքականության ակադեմիական հետազոտություններում երկու միտում է հստակեցվում, որոնցից առաջինում այն համարվում է պետական քաղաքականության մաս, որի մշակողն ու իրականացնողը

Сканировано с CamScanner

պետությունն է, իսկ երկրորդում՝ այն ընկալվում է իբրև ընդհանրական գործընթաց որին կարող են մասնակցել բոլոր ցանկացողները՝ անհատներ, հասարակական կառույցներ, պետություն:

Ժամանակակից մշակութային քաղաքականության մեջ ատենախոսն առանձնացնում է երկու հիմնական դիրքորոշում, որոնցից առաջինը մշակութային քաղաքականության միջազգային նախաձեռնություններն են, որ արտահայտվում են տարաբնույթ փաստաթղթերում՝ միավորման ու համագործակցության հնարավորություն ստեղծելով տարբեր պետությունների միջև, իսկ երկրորդը՝ համեմատաբար անկախ, ակադեմիական, գիտական հետազոտությունները:

Հիշենք նաև, որ ըստ ՅՈՒՆԵՍԿՕ-ի սահմանած կարգի՝ պետությունն է երկրի մշակութային քաղաքականության մշակողն ու իրականացնողը, և անդամ-պետությունների պարտավոր են ընդունել միջազգային օրենքների գերակայությունը:

Հ. Մուրադյանի ատենախոսական աշխատանքը միջգիտակարգային հետազոտության շատ հաջողված օրինակ է, որի ընթացքում հեղինակը ներդաշնակորեն համադրել է մշակութային մարդաբանության, պատմագիտության, մշակույթի սոցիոլոգիայի և քաղաքագիտության մեջ կիրառվող հետազոտության ու վերլուծությունների ժամանակակից մեթոդներն ու գործիքները:

Ի պատիվ ատենախոսի պետք է նշել, որ աշխատանքն իրականացնելու համար մանրամասնորեն ուսումնասիրվել են մասնագիտական գրականության մեջ խնդրին առնչվող հայ և օտար հեղինակների կողմից շրջանառվող տեսական բոլոր դիտարկումներն, առանցքային դրույթներն ու եզրահանգումները՝ որոնք քննարկվել են ատենախոսի հավաքված հարուստ դաշտային, արխիվային նյութերի և տարբեր աղբյուրներում տեղ գտած տարաբնույթ փաստերի համատեքստում: Դրանք մանրամասնորեն բնութագրվում և վերլուծվում են յուրաքանչյուր թեման կամ խնդիրը պարզաբանելու, հեղինակի եզրակացությունները հիմնավորելու նպատակով: Ըստ այդմ՝ հմտորեն համադրելով հումանիտար գիտությունների տարբեր ոլորտների ձեռքբերումները, մասնագիտական հետազոտությունների մեթոդաբանությունն ու արդյունքները՝ ատենախոսին հաջողվել է իրականացնել իր առջև դրված բարդ խնդիրները՝ համեմատական քննության շրջանակներում կառուցելով սեփական գիտական վարկածներն ու ուսումնասիրությունից բխող եզրակացությունները:

Ատենախոսության առաջին գլուխը նվիրված է Խորհրդային Հայաստանի մշակութային քաղաքականությանը, որտեղ հեղինակը հանգամանորեն բնութագրում ու վերլուծում է ձևավորման և կայացման ընթացքը: Գիտնականին բնորոշ հավասարակշիռ ու անկողմնակալ դիրքորոշմամբ՝ հստակ բնութագրում ու

Сканировано с CamScanner

վերլուծում է Խորհրդային Միության գաղափարախոսության վրա խարսխված մշակութային քաղաքականության ձևավորման, պատմական զարգացման ընթացքն՝ ըստ զարգացման իր կողմից առաջարկվող հինգ փուլի («կուլտուրական հեղափոխություն», համատարած անգրագիտության վերացում, պայքար նախկին մոդելների դեմ, անձի պաշտամունք, սոցիալիստական ինքնության ձևավորում սոցռեալիզմի միջոցով, ձնհալի, լճացման և վերակառուցման տարիներ):

Խնդիրն առավել արդյունավետ դիտարկելու նպատակով՝ առանձնացնում է 1920-30-ական և 1950-60-ական թվականներին բնորոշ գաղափարախոսությունն ու դրանից բխող քաղաքական գործընթացները: Մանրամասնորեն քննարկում է մշակույթը, որպես ժամանակին բնորոշ քաղաքական-գաղափարական գործիք, մշակույթի կառավարման բրգաձև մոդելը, մշակույթի տարածման հորիզոնական և ուղղահայաց եղանակները և դրանց խորապատկերում ներկայացնում «ինտերնացիոնալ» և «ազգայնական» ընկալումներն ու մշակութային քաղաքականության մեջ որդեգրված «Ձևով՝ ազգային, բովանդակությամբ՝ խորհրդային» կարգախոսի նպատակն ու կիրառումը: Այս համատեքստում, հանգամանորեն անդրադառնում է գաղափարախոսության հիմքի վրա խարսխված խորհրդային քաղաքացու և մտավորականի նախընտրելի կերպարների ձևավորման ու խրախուսման համալիր գործընթացին, որի իրականացման համար գործող ագիտացիայի ու պրոպագանդայի համակարգում ներառվում էին բոլոր ոլորտները՝ լեզուն, կրոնը, կրթությունը, լուսավորությունը, գրադարանը, մամուլը, գրականությունը, թանգարանը, թատրոնը և այլն: Կուզենայինք ընդգծել հատկապես հետազոտության այս հատվածի հակիրճ և ըստ էության ամփոփումը, որը հստակ բնութագրում է հիշյալ ժամանակի ամբողջական պատկերը: Այդ շրջանի համար առանցքային էր բարձրագույն կրթության, լուսավորության, հրատարակչության, արվեստի, կինոմատոգրաֆիայի, ռադիոյի և մի շարք այլ ոլորտների գործունեությունը կարգավորող մարմինների միավորմամբ՝ 1953թ. ԽՍՀՄ Կուլտուրայի Մինիստրության ստեղծումը: Այդ նոր ինստիտուտի միջոցով հստակեցվում էր մշակույթի կառավարման համակարգը՝ որոշ առումով, առանձնացվելով պետական-գաղափարախոսական կառույցներից և վերաճում քաղաքականության առանձին բնագավառի: Ինչպես նշում է ատենախոսը՝ նմանատիպ նախարարություններ ստեղծվեցին նաև Միության բոլոր հանրապետություններում, որոնք, ըստ էության, կենտրոնի մասնաճյուղերն էին և միասնական սկզբունքներով ու հրահանգներով էին ղեկավարում ոլորտը: Հիշյալ հարցերի շրջանակում քննության է առնվում ԽՍՀՄ-ում գործող մշակույթի կենտրոնացված կառավարման ինստիտուցիոնալ համակարգը՝ գործող ենթակառուցվածքներով, որը, մասնակի ձևափոխություններով, գործում էր նաև

Сканировано с CamScanner

հետխորհրդային Հայաստանում: Ատենախոսը նրբորեն անդրադառնում է նաև Խորհրդային Հայաստանի Մշակույթի նախարարության ու պետական այրերի վարած քաղաքականությանը՝ ընդգծելով ղեկավարի (առաջնորդ) անհատականությունից, աշխարհայացքից և երկրի զարգացման վերաբերյալ տեսլականից բխող գործունեությունը, որով ընթերցողին նախապատրաստում է ատենախոսության երկրորդ գլխում առավել մանրամասն ներկայացվող՝ քաղաքական առաջնորդ-մշակութային քաղաքականության մոդել փոխհարաբերությունների քննությանը:

Մեծ ուշադրությամբ է կարդացվում աշխատանքի երկրորդ գլուխը, որը նվիրված է հետխորհրդային Հայաստանում մշակութային քաղաքականության նոր հայեցակարգի ձևավորման ու իրականացման խնդիրներին: Հետխորհրդային շրջանն առավել համակողմանի ու ամբողջական ներկայացնելու և վերլուծելու համար՝ հակիրճ անդրադառնում է կենտրոնացված կառավարման խորհրդային տոտալիտար մոդելի փլուզմանը, սոցիալ-քաղաքական ներքին ու արտաքին մարտահրավերներին, անկախացման տարիներին ստեղծված միջազգային հարթակներում պետությունը ներկայացնելու նպատակով իրականացվող քաղաքական-տնտեսական և օրենսդրական փոփոխություններին: Հիմնվելով հռչակավոր գիտնականների առաջարկած տեսությունների վրա՝ փորձում է համակողմանի վերլուծել անկախության շրջանում ՀՀ երեք նախագահների գործունեությունը և ըստ քաղաքական առաջնորդի տիպի էլ մշակութային քաղաքականության ձևավորման ու զարգացման փուլաբաժանում կատարել (Լ. Տեր-Պետրոսյան՝ լիբերալ-ազատական, Ռ. Քոչարյան՝ պետական-բյուրոկրատական՝ և Ս. Սարգսյան՝ վերոնշյալ երկու մոդելների համադրում): Նշենք, որ 1991-2018թթ. իրողությունները՝ քաղաքական առաջնորդ-մշակութային քաղաքականության նոր մոդել դիտանկյունով՝ առաջին անգամ են գիտական քննարկման ներկայացվում և ատենախոսության նորույթներից են: Այսուհանդերձ, մանրամասնորեն բնութագրելով ու վերլուծելով երեք նախագահների գործունեությունը երկրի ներքին ու արտաքին քաղաքականության, տնտեսության զարգացման ու մշակութային քաղաքականության ոլորտներում՝ փոքր-ինչ ստվերում է թողնում այդ տարիներին ակտիվ գործող հասարակական կազմակերպությունների դերակատարումը:

Ամբողջովին ինքնուրույն և ինքնատիպ շարադրանք է ատենախոսության երրորդ գլուխը՝ նվիրված խորհրդային և անկախացման տարիներին ՀՀ-ում մշակութային քաղաքականության ինստիտուտների դերին, գործունեությանը, մշակութային ժառանգության պահպանման, զարգացման, տարածման, իմաստային ու գործառութային խնդիրների փոխակերպումներին: Այս հարցերը քննարկվել են նշված ժամանակներին բնորոշ գյուղական ակումբների, մշակույթի տների և

Сканировано с CamScanner

ստեղծագործական միությունների օրինակով: Դաշտային ծավալուն հետազոտության շրջանակում ընդգրկվել են ՀՀ գրեթե բոլոր մարզերի քաղաքային և գյուղական բնակավայրերի 63 մշակույթի տուն, 6 ստեղծագործական միություն, մշակույթի տարբեր ոլորտները ներկայացնող մասնագետների 14 փորձագիտական հարցում (տե՛ս հավելվածը): Հավաքված պատմափաստագրական և դաշտային հարուստ նյութի հիման վրա՝ գյուղական ակումբներն ու մշակույթի տները դիտարկվում են իբրև խորհրդային մշակույթ ձևավորող, արմատավորող ու զանգվածայնացնող ինստիտուցիոնալ կառույցներ: Անդրադարձ է արվում մշակույթի տների սոցիալական գործառույթին և շեշտվում «ձնհալից հետո», 1960-ական թթ.-ից ծավալվող ազգային բովանդակությամբ մշակութային արժեքների տարածմանը: Մանրամասնորեն բնութագրվում ու վերլուծվում են մշակութային այս ինստիտուտների գործառույթների ու ճակատագրի փոխակերպումները հետխորհրդային շրջանի քաղաքական-գաղափարական ու տնտեսական զարգացումների համայնապատկերում: Հատկապես հաջողված ենք համարում հետխորհրդային տարիներին մշակույթի տների գործառույթների և գործունեության փոխակերպումներին նվիրված հատվածում ատենախոսի դիպուկ բնութագրումները, վերլուծությունն ու եզրակացությունները, որոնք առավելապես հիմնված են դաշտային հարուստ հետազոտությունների վրա և նման համակողմանի ներկայացմամբ՝ երևույթը լուսաբանող մշակութաբանական առաջին դիտարկումներն են:

Հաջորդ՝ ստեղծագործական միություններին նվիրված ենթագլխում այս կազմակերպությունները դիտարկվում են իբրև խորհրդային մտավորականության ձևավորման, վերահսկման և կառավարման մեխանիզմներ: Ստեղծագործական միությունների մասին խոսելիս, հիմնական շեշտը դրվել է խորհրդային շրջանում դրանց ձևավորման նախադրյալների, նպատակների կանոնադրական իրավունքների ու պարտականությունների, ֆինանսական, նյութական ու ինտելեկտուալ ռեսուրսների, պետական կառույցներից արտոնություններ տրամադրելու, պետպատվերի ու տարաբնույթ հնարավորություններից օգտվելու և հետխորհրդային շրջանում գործառույթների ու դերակատարության փոփոխությունների վրա:

Եզրակացությունների հատվածում, ըստ ամենայնի, ամփոփվում է կատարված հսկայական աշխատանքը և հստակ ներկայացվում են հետազոտությունից բխող եզրակացությունները: Աշխատանքի վերջում տեղադրված են օգտագործված գրականության և աղբյուրների (263) ցանկերը և ծավալուն ու բովանդակալից հավելվածը, որի միջոցով ակնառու է դառնում հավաքված դաշտային նյութը: Վերը շարադրվածից ինքնին հասկանալի է, որ ներկայացված ատենախոսությունը Հ.

Сканировано с CamScanner

Մուրադյանի տարիների նպատակասլաց ու տքնաջան աշխատանքի արդյունքն է, որն, անշուշտ, պետք է ըստ արժանվույն գնահատել:

Այսուհանդերձ, աշխատանքը զերծ չէ նաև մասնակի վրիպումներից որոնց վրա կուզենայինք հրավիրել ատենախոսի ուշադրությունը՝

- Խորհրդային մամուլն ու պարբերականները որպես մշակութային քաղաքականության իրականացման գործիքներ դիտարկելիս՝ ցանկալի կլիներ իբրև օրինակ ներկայացնել Մշակույթի նախարարության պաշտոնական օրգան «Կուլտուր-լուսավորական աշխատանք» ամսագրի յուրաքանչյուր համարում պարտադիր հրատարակվող և ՀՀ-ում գործող մշակույթի տների ինքնագործ թատերական խմբակի կամ ժողովրդական թատրոնի խաղացանկում առաջարկվող նախընտրելի պիեսների թարգմանությունները (հիմնականում ռուս հեղինակների): Եվ այդ համատեքստում անդրադառնալ նաև թատերական ներկայացումների թեմատիկ-ժանրային առանձնահատկություններին ու խորհրդային քաղաքացու, ընտանիքի, ղեկավարի օրինակելի կերպարի պրոբլեմանդմանը՝ արվեստի այս ճյուղի միջոցով:
- Մշակույթի միջոցով ԽՍՀՄ գաղափարախոսության տարածման մասին խոսելիս՝ կարելի էր դաշտային և փաստագրական նյութերից քաղված օրինակների շարքում ընդգծել նաև նաև մշակույթի տների պարի խմբակների պարացանկը, որտեղ պարտադիր էին հայկական ժողովրդական, ռուսական, վրացական, գնչուական, երբեմն նաև՝ ուզբեկական, հրեական կամ այլ եղբայրական ժողովուրդների պարերի բեմականացումները: Կարելի էր նշել նաև, որ պարարվեստի մասնագիտացված ոլորտում՝ բոլոր հանրապետություններում, պարտադիր ստեղծվում էին «Բարեկամություն» անվամբ նմանօրինակ պարի համույթներ:
- Գրադարանների դերակատարությանն անդրադառնալիս՝ ցանկալի էր շեշտադրել նաև Մշակույթի տան ընթերցասրահի դերը: Ըստ այդմ, ցանկացած բնակավայրում լայն հանրության համար հասանելի ու մատչելի էին դառնում հանրապետության և միութենական պաշտոնական կառույցների օրգան հանդիսացող թերթերն ու ամսագրերը, որոնց միջոցով հանրայնացվում էին խորհրդային քաղաքականությունն ու գաղափարախոսությունը և ներկայացվում տարբեր ոլորտներում օրինակելի կամ պարսավելի երևույթները: Եվ ընթերցասրահի վարիչի կամ գրադարանի միջոցով կազմակերպվող պարբերական թեմատիկ բանավեճերի, քննարկումների ու զրույցների միջավայրում կազմակերպվում ու ուղղորդվում էր հանրույթը:

Сканировано с CamScanner

- Կարծում ենք շատ դիպուկ ու կարևոր է մշակույթի տների նկատմամբ վերաբերմունքի ու բարերարների նախասիրությունների խնդրին անդրադարձող, 123 էջի տողատակի դիտարկումը, որը կարող էր հիմնական տեքստում քննարկվել՝ ներկայացնելով հանրային դիսկուրսը:
- Խորհրդային առաջին տարիներին ստեղծագործական տարբեր կազմակերպությունների մասին խոսելիս՝ կարելի էր համեմատել ավանդական մշակույթում արմատացած արհեստավորական համքարությունների նպատակների ու գործունեության հետ: Ստեղծագործական միությունների գործունեությունը ներկայացնելիս՝ ցանկալի կլիներ փոքր-ինչ անդրադառնալ նաև մասնագիտական գործոնին (օրինակ՝ ոլորտի զարգացմանն առնչվող հարցեր, ձևի, կառուցվածքի, թեմաների ու ոճերի դասական ու ժամանակակից մեկնաբանություններ), տարբեր խնդիրների քննարկումներին, ոլորտի զարգացմանը, ԽՍՀՄ հանրապետությունների գործընկերների ու նմանօրինակ կառույցների հետ համագործակցությանը և նույն բնագավառում տարբեր սերնդի ստեղծագործողների փորձի փոխանակմանը: Ըստ այդմ, առավել բազմաշերտ կներկայացվեր ստեղծագործական միությունը, որպես ոլորտը կազմակերպող ու առաջնորդող ինստիտուտ՝ դրանից բխող դրական ու բացասական բոլոր հետևանքներով:
- Կարծում ենք, աշխատանքն առավել համընդգրկուն կլիներ, եթե հավելվածում զետեղվեին հարցազրույցների սղագրությունները: Եվ ընդհանրապես, հավաքված հսկայական դաշտային նյութը կարելի էր ավելի շատ ներկայացնել տեքստում՝ շեշտելով ու հիմնավորելով վերլուծության տրամաբանությունն ու եզրակացությունները:

Ատենախոսության շարադրանքը նաև մասնակի խմբագրման կարիք ունի՝ որոշ կրկնություններից և օտարալեզու արտահայտություններից ձերբազատվելու նպատակով: Օրինակ՝ մշակույթի նախարարությունը, որպես ոլորտը կազմակերպող ու կառավարող պետական ինստիտուտ, առաջին անգամ ստեղծվել է ԽՍՀՄ-ում, թե՞ Ֆրանսիայում հարցի քննության առումով՝ կրկնվում է էջ 113-ի հղումը՝ Շարլ Դը գոլի և Անդրե Մալրոյի կառավարման տարիներին Ֆրանսիայում Մշակույթի նախարարության ձևավորման ու գործունեության վերաբերյալ:

Կրկնությունների շարքում են նաև էջ 119-ի տողատակի հղումը՝ Մշակույթի նախարարության պաշտոնական օրգան «Կուրլտուր-լուսավորական աշխատանք» ամսագրի ձևավորման և գործունեության վերաբերյալ, ինչպես նաև՝ էջ 122-ում Խրուշչովյան «ձնհալի» վերաբերյալ տողատակի հղումը:

Сканировано с CamScanner

Այսուհանդերձ, նշված մասնակի վրիպումներն ամենևին չեն ստվերում ատենախոսի կատարած հիմնարար աշխատանքը, որը նոր խոսք ենք համարում մշակութային քաղաքականության հետազոտության ոլորտում: Եվ վստահ ենք, որ այն անհրաժեշտ է հրատարակել մենագրության տարբերակով՝ գիտական, կրթական ու մշակութային քաղաքականության ռազմավարություն մշակող կառույցներում լայնորեն շրջանառելու նպատակով:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ԲՈԿ-ի կողմից ներկայացված չափանիշներին: Հեղինակի հրատարակած հոդվածներն արտացոլում են ատենախոսության հիմնական դրույթները: Հայկուհի Մուրադյանի ներկայացրած թեկնածուական ատենախոսությունը բավարարում է ՀՀ ԲՈԿ-ի «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» պահանջները, ուստի կարծում ենք, որ ատենախոսը լիովին արժանի է իր հայցած գիտական աստիճանին և, իբրև պաշտոնական ընդդիմախոս, միջնորդում ենք մասնագիտական խորհրդին՝ Հայկուհի Մանվելի Մուրադյանին շնորհել իր հայցած Թ 00.06 «Մշակութաբանություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը:

ԵՊՀ Մշակութաբանության ամբիոնի դոցենտ,
ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի ավագ գիտաշխատող,

պ.գ.թ.Հռիփսիմե Վահրամի Պիկիչյան

Հռիփսիմե Պիկիչյանի ստորագրությունը հաստատում եմ

ԵՊՀ Պատմության ֆակուլտետի դեկան՝ պ. գ. դ. Է. Մինասյան

30 օգոստոսի 2021թ.

Сканировано с CamScanner